

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԶԲՈՍԱՆԵՔ.

Մանկական հասակը պահանջում է խաղ և զբուսանք օրօրոցից սկսած մինչ ցհասուն հասակն, որ սիրում է իւր թանկագին հաղուստներից, համազամ կերակուրներից և միրգերից աւելի, արհամարհում է ցուրան ու տօթն, քաղցն և ծարաւն, ինական է այս միտումն, այս ցանկութիւնն, որի զէմ արգելք զնողն մեղանչում է նոյն խակ բնութեան դէմ, լինելով պատճառ բաղում վնասների նիւթապէս և բարոյապէս Աւատի նա որ ծնօղ կամ խնամածու կամ ուսուցիչ լինելու կոչումն ունի պարաւոր է հաւասար մանուկի սննդի և ուսման հոգս տանել, նաև նորա խաղերի և զբուսանքի տեսակներին, և ընարել խաղալու և զբուսանքի տեսակները, և արգելել միայն այն խաղերն, որոնք բարոյականութեան կամ առողջութեան վեասում են:

Եյն մանուկն, որ դատապարտված է չխաղալ և չզբունել, լինում է վատառողջ, ապուշ և բժամիտ, մի խօսքով բնութեան վիժած և մարդկութեան անպիտան անդամ, յայտնի ձշմարտութիւն է, որ մանուկի ամենամեծ պատիմն է խաղեց զրկվելն, որի համար բարեմիտ և խոհական ծնօղները կամ ուսուցիչները սահմանել են փոխանակ մարմարական պատիմների, զրկել ծոյլ և վատարարոյ մանուկն իւր խաղերից, որը շատ անդամ յօժարում է քաղցած մնալ ժամերով, բայց փոքր ինչ միջոց չզբկվել իւր խաղեց, Աւատի շատ հարկաւոր պիտոյքների մին է սահմանել ուսումնարանների մէջ զբուսալի խաղեր, իւրաքանչեւր $\frac{5}{4}$ ժամ՝

զասառութիւնից յետոյ, $\frac{1}{4}$ ժամ բաց ողի մէջ ազատորէն խաղալ և ապա $\frac{1}{4}$ ժամ ևս պարապել ուսումնական խաղով, որով զուարձանալով ուսանին և ուսանելով զուարձանանան, որովհետեւ երբ ուսումն զբուսալի և զուարձալի եղանակով կտանդվի, աշակերտներ յօժարութեամբ կուսանին և անմոռանալի տպաւորվում է նոցա մոքի մէջ գործնական մշակութեան միջոցով, որ է սասանական խաղալ, որ պատրաստելու է հետեւեալ կերպով։ Աւսուցիչն իւր դասախոսած առարկայի վերաբերեալ զիտելիքներից զանազան հարցեր հանելով, առանձին տոմսակների վերա զրելով խաղաթղթի (կարտի) ձեռվ, զբուսանքի ժամանակը զնում է սեղանի վերա, որի շուրջը հաւաքելով մի դասակարգի աշակերտներ սկսում են խաղանել. մին վեր է առնում մի տոմսակ, բարձր ձայնով կարգում է նորա վերա զրված հարցն, և երբ օրինաւոր կերպով պատասխանում է, իւր մօտն պահում է նոյն տոմսակը։ Յետոյ միւս ընկերն վեր է առնում մի ուրիշ տոմսակ և հարցնում է ու պատասխանում է, բայց երբ չէ կարօղանում ձիշտ պատասխանել, միւս ընկերն ձեռքից առնելով ինքն է պատասխանում, այսպէս շարունակվում է խաղըն, մինչև կաւարտվին տոմսակներն։ Յետոյ իւրաքանչեւր ոք համարում է իւր տոմսակներն, որին շատ է, նա տարած է խաղն, իսկ որին սակաւ է, նա յաղթված է համարվում։ Աւսուցիչներկայ լինելով խաղին, զիտում է, որ երբ պատահի մի հարց, որին չկարողանան պատասխանել, ինքն պատասխանում է և պարզում է, ապա նոյն տոմսակը կրկին զնում է տա-

կաւին վեր չառած տոմսակների մէջ և շարունակել է տալիս խաղն։ Ի՞այց պէտք է որ ուսուցիչը իւր դէմքի վերա ցոյց տայ քաղցրութեան ժայիտ և միանգամայն համարվի իրեւ մի խաղընկեր։ Դժուարին հարցերն պարզելու է կամ կրկնելու է այնպիսի եղանակով, որ բովանդակէ իւր մէջ պատասխանին վերաբերեալ բառեր, օրինակ, երբ հարցն կլինի թէ «համաշխարհական ջրհեղեղն է՞նչ» համար եղած է ։, եթէ խաղացօղն չկարօղանայ պատասխանել, հարցման ձևն փոխելով հարցնելու է ուսուցիչն. «Ե՞ն հարդի չարակալը, Այսկեն ո՞ւ ի՞նչ հետ խեռնուին անելու համար, Ասուսած ի՞նչուն պատճեց ։, իսկոյն աշակերտի միաքն արթնալով պատասխանում է թէ «համաշխարհական ջրհեղեղն ջնջվեցան»։

Ես յս կերպ ուսումնական պէտականութեալ խողոված ծագում է աշակերտների մէջ ուսմամբ միմեանց յաղթելու գովելի եռանդ մի և նախանձ, որի փորձն ենիքս տեսած եմ Ա. Պոլսի և Ա. անի ուսումնարանների մէջ դորձաղրելով, որի օգտակարութեանը՝ վերա Խրիմեան Ա. Հայրեկը ընդարձակ գրել է 1864 թուի «Երծիւ Ա. ասպուրականի» ամսագրի մէջ և յորդորել է Ա. անի ուսումնարանները հետեւել մեզ, և որոնք հետեւելով բաւական օգուտ տեսան աշակերտների մտաւոր զարգացմամբ։ Յետոյ Ասուսաստանի մէջ Խզիրի և Ա. աղարշապատի ծխական ուսումնարանների մէջ ևս շարունակելով յիշված սահմանական պէտական, շարունակ նոյն օգուտան տեսնված է։ Աւստի առաջարկում եմ ծխական ուսումնարանների պատուելի ու-

սուցիչներին գէթ իրբեւ մի փորձ հետեւել մեզ, մանաւանդ նոքա որոնք ըւնին բռնաբանական պարտէղներ, զանազան կենդանիների տեսակներ կամ գէթ նոցա պատկերներ, թանգարաններ և լին, նոցա վերա ուսումնական զբուանք և կրթութիւններ անել տալու համար, գոնէ իւրեանց աւանդած չոր և ցամաք զասերն հետաքրքրական հարցերով և պատասխաններով մշակելով կարօղ լինին փոքր իշտեւ մերձենալ իւրեանց նպատակին։ Աշակերտներն ինքնին բնական բերմամբ ստիպվում են հարցասիրել իւր դասընկերին իւր դաս առած առարկաների վերա միմեանց յաղթելու նպատակով, և շատ անգամ աշակերտներ յօժարակամ նուիրում են իւրեանց պարապ և զբուանքի ժամերն այս կերպ ուսումնական խաղին։ Եթբ առաջնակարգ աշակերտներ պարագին այս կերպ զբուանքով, վերջին կարգի ուսմանօղներ ինքնին հարցման տումսակներ են շինուամ պ. Տէր Վեռնողեանի Ա. տարու մայրենի լիզուի առարկաների վերա օրինակ դասական խաղալիք, դործիք, սարք և լին. առարկաների, միմեանց հարցնում են և զգատօրէն պատասխանում են մանրամասն գիտելիքներով, և այս անում են առանց ուսուցչի հարկադրութեան։

Մենք ցանկանալով օգնել ծխական ուսումնարանների ուսուցիչներին և աշակերտներին, պատրաստել ենք սահմանական խաղաներներ իւրաքանչեւը առարկայից. 300 տոմսակ քերականութենից, 300 տոմ. քրիստոնէական վարդապետութենից, 300 տոմ. ընդհանուր պատմութենից, 300 տոմ. բլ-

նական զիտութենից և աշխարհազրութենից, 300 տոմ. ս. պատմութենից։ Եյս հարց ու պատասխանին հաւաքելնք ամենընտիր դասազրբերից, որ այժմ ընդունված են և զործադրվում են շատ տեղեր։ Հարցերն հետաքրքրական են և պատասխաններն պարզ, բովանդակ և մաքուր լիզուով, որ խոստանում եմ նուիրել յօդուտ Ռագուի Մարդասիրական Շնկերութեան, եթէ բարեհաջետ տպազրութեամբ ի լոյս ընծայել խաղաթերթի ձեռվ հաստ թղթի վերա։

Եյս հարց ու պատասխանի խաղաթերթերն թէ իրրեւ դասազիրք կարեի է զործադրել ծխական ուսումնարանների մէջ և թէ միանգամայն իրրեւ սահմանական պահանջութեամբ ի լոյս ընծայել խաղաթերթի ձեռվ հաստ թղթի վերա։

Ս. ԳՆՈՒՅԻՆ.

Վ Ա Ր Ա Ր Ա Մ Պ Ա Յ Ա Ր Ա

Ուրախութեամբ կհրատարակենք պ. Գնունու ներկայ յօդուածը, որ օգտաւէտ առաջարկութիւն կանէ և կղաքանենք սորան հոգեոր զպրոցների ուսուցիչների ուշացը։ Խոմբ։

ՀԱՅԱՍՏԱՆ ԵԲ ՄԻԶԱԳԵՑՔԸ ԴԻԻՑԱՉԱԿԱՆ ԳԱՐԵԲՈՒՄ։

Հին ժամանակներն արեւմտեան Ասիայի քաղաքական կեդրոնը Միջագետքն էր. գտնուելով շրջակայ աշխարհներն իւր հանգուստի մէջ միացնող մի հոլոսում, Միջագետքը շատ կանուխ ժամանակներից մի հզօր աշխարհակալութեան ասպարէզ էր եղած։

Այստեղ էր փորձում ամենայն մի աշխարհակալ իւր քաղաքական բաղդը. այստեղ էր ամենայն մի նոր քաղաքական ասպարէզ ելող աղքի կամ ցեղի ցանկալի նպատակը։ Այսպէս մենք գիտենք, որ այստեղ ծնաւ Ասորեստանի աշխարհասասան պետութիւնը, որի փառաւոր յիշատակը կազուած է Նինոսի եւ Նամիրամի առասպելների հետ. այստեղ զօրացաւ գոռոզ Բարիլոնը, Խորայէլի գերութեան նախապատճառը եւ աղքերի ու աշխարհների հզօր լժադիրը. այստեղ կանգնեցաւ Աղէմէնիսեան թագաւորութեան գահը, որ օտար աղքերի արքայական ծանր թագերից էր կռանած. այստեղ յագեցուց իւր անհուն փառասիրութեան ծարաւն եւ մեծն Աղէքսանդրը, Հելլենական քաղաքակրթութեան առաջին առաքեալն Արեւելքում։ այստեղից գողացուցին Պարթեւներն աշխարհասասան Հռովմայեցիներին. այստեղից ջղակտոր արին Սասանեաններն եւ խարդախ Բիւղանդիային. ի վերջոյ այստեղ ծաղկեցաւ Արեւելքի քրիստոնէութեան գլուխն սուր եւ հուր տեղացող հաղդադ մայրաքաղաքը, ուր երկար գարեր ծածանում էր Մահմէտի քաղաքակրթութեան արիւնաթաթախ գրօշակը։

Քանի որ այսչափ մեծ էր Միջագետքի քաղաքական նշանակութիւնն իրեւ կեդրոն, այնչափ ծանր էր եւ աղքերի ու աշխարհների վտանգը։ Այն աղքերը, որոնք իրենց երկրի աշխարհագրական պայմանների երեսից աւելի նուաստ վիճակի մէջ էին, չգտնուելով Միջագետքի քաղաքական սահմանների մէջ,